ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար տասնյոթ թվականի հոկտեմբերի քսանյոթին

Մենք՝ ներքոստորագրողներս, մի կողմից «Թիվ 17 պոլիկլինիկա» Փակ Բաժնետիրական Ընկերությունը, /պետական գրանցման վկայական 01 Ա 022800, տրվ 29.02.1996. թ., գտնվելու վայրը՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 36ա/, ի դեմս տնօրեն Սաթենիկ Վազգենի Բաղայանի, հաշվ. ք. Երևան, Գլինկայի փ. 2ա շ, 31 բն., անձնագիր AK 0319865, տրված 009-ից, 19.06.2009թ., որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա /այսուհետ «Վարձատու»/, մյուս կողմից «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը»-ը /պետական գրանցման վկայական 01 Բ 000932, տրվ. 21.04.2004թ., գտնվելու վայրը ք. Երևան-10, Կառավարական տուն 3/, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Աշոտի Գրիգորյանի, հաշվ. Մարտունի, Աստղաձոր 4փ. 16 տուն, անձնագիր AM 0389543, տրված 25.07.2011թ. 043-ից, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ «Վարձակալ»/:

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Տիգրան Մեծի պող. թիվ 36ա հասցեում գտնվող անշարժ գույքից ըստ հատակագծի կիսանկուղից թիվ 24-3.5 քմ, թիվ 25-20.5քմ, թիվ 26-12.3 քմ, թիվ 29-13.2 քմ և թիվ 30-12.5 քմ մակերեսներով տարածքները /հատակագիծը կցվում է/, բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Պետական կոմիտեի կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 18.12.2007թ. տրված թիվ 2267344 սեփականության իրավունքի վկայականի: Օբյեկտի նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման կողմից 25.10.2017թ.-ին տրված թիվ N ՄՏ-25102017-01-0431 միասնական տեղեկանքի:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը վարձակալության է տրվում մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը: Օբյեկտը հանձնվել է 27.10.2017 թվականին:

1.3 Վարձակալության հանձնված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի, հինք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի

2.1.1 Վարձակալից պահանջել օբյեկտն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ՝ հինգ օրվա ընթացքում մուծել վարձավճարը.

2.1.3 Եթե Վարձակալն օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակության էական խախտումներով, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2 Վարձատուն պարտավոր է